



ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱԶԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅԻՐ

(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱԶԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ԲԴ ՀԱՐԿ)



Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել <https://verify.e-gov.am> կայք
ուև մուտքագրելով IE65-5990-4BAD-B2FF հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը:

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/1504/02/26

ՈՐՈՇՈՒՄ

**ՀԱՅՑԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

02.03.2026թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Կրթական Ծրագրերի Կենտրոն Ծրագրի Իրականացման գրասենյակ» պետական ՀՍ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն

պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Արմավիսբանկ» ՓԲԸ-ի՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 13.02.2026 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/1504/02/26 քաղաքացիական գործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **13.02.2026 թվականին, ժամը 21:31-ին, իսկ հասանելի է դարձել 16.02.2026 թվականին:**

Դատարանի 18.02.2026 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 18.02.2026 թվականի որոշմամբ Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, բավարարվել է:

Դատարանի 26.02.2026 թվականի որոշմամբ որոշվել է թիվ ԵԴ2/1504/02/26 քաղաքացիական գործը քննել դատական նիստում և հրավիրվել է դատական նիստ՝ 04.03.2026 թվականին, ժամը 12:00-ին:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 27.02.2026 թվականին ներկայացվել է միջնորդություն՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին:

Դատարանն, ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և այն համադրելով ներկայացված հայցադիմումի հետ՝ արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող

անձանց ներկայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասը հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի թույլատրելիության համար սահմանել է երկու չափանիշի միաժամանակյա առկայություն՝ հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը դատարանն ընդունում է, եթե չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հայցի առարկան փոփոխելու դեպքում սահմանված է պետական տուրքի գանձման պահանջ այն դեպքում, երբ հայցի առարկան փոփոխելու դեպքում սկզբնական հայցով վճարված պետական տուրքի գումարը չի բավականացնում: Ընդ որում, պետական տուրքը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս, հետևաբար հայցի առարկայի փոփոխության դեպքում դատարանը պետք է անդրադառնա նաև պետական տուրքի գանձման հարցին՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասը:

Վերոգրյալը հաշվի առնելով Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքում իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի փոփոխությունն առկա չէ, ինչպես նաև քննվող գործը դուրս չի գա առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, բացի այդ հայցի նոր առարկայի շրջանակներում պետական տուրքի չբավականացնող մասը վճարվել է Հայցվորի կողմից, հետևաբար Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.5-րդ հոդվածի համաձայն՝

(...)

3. Համակարգն օգտագործող անձի համար դատական ակտը համարվում է հրապարակված (կամ կայացված), եթե այն Համակարգի միջոցով **հասանելի է դարձել** Համակարգն օգտագործող անձին:

4. Համակարգն օգտագործող անձի համար դատական ակտը համարվում է վերջինիս ուղարկված, եթե այն **Համակարգի միջոցով հասանելի է** դարձել Համակարգն օգտագործող անձին:

5. Դատական ակտերը համարվում են Համակարգն օգտագործող անձի կողմից ստացված դրանք իրեն **հասանելի դառնալու պահից երեք աշխատանքային օր հետո:**

(...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7 հոդվածի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Տվյալ դեպքում հայցվոր՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, բավարարման ենթակա լինելու պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող՝ «Կրթական Ծրագրերի Կենտրոն Ծրագրի Իրականացման գրասենյակ» պետական ՀՄ-ին և երրորդ անձ՝ «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ին պետք է տրամադրվի սույն դատական ակտը ստանալուց հետո **հնգօրյա ժամկետ**՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի ընդդեմ «Կրթական Ծրագրերի Կենտրոն Ծրագրի Իրականացման գրասենյակ» պետական ՀՄ-ի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ի՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին բավարարել:

Թույլատրել հայցի հիմքը **փոփոխել և լրացնել** հետևյալ բովանդակությամբ.

«ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ն, ի դեմս ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի, 16.02.2026թ.- ին կայացրել է N

11-Լ հրամանը (այսուհետ նաև՝ Հրաման)՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ /կցվում է/, որը www.gnumner.am համակարգում հրապարակվել է 19.02.2026թ.:

Վերոհիշյալ հրամանի համաձայն. «Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքների առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»: Համաձայն հրամանի՝ որպես փաստական հանգամանք (անհրաժեշտ տեղեկատվություն) նշված է հետևյալը. «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները մասամբ, մասնավորապես՝ բացակայում է Wi-Fi երթուղիչի ապրանքատեսակների արտադրողի կամ պաշտոնական դիստրիբյուտորի կողմից տրամադրված երաշխիքային նամակը MAF/DAF-ի: Այսինքն մասնակիցը գնահատող հանձնաժողովի սահմանած ժամկետում պատշաճ կարգով չի վերացրել մատնանշված բոլոր թերությունները»:

(...)

Գտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի, 16.02.2026թ.-ին կայացրած N 11-Լ հրամանը՝ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հետևյալ հիմնավորմամբ.

1) Նախ, գտնում ենք, որ ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի հրամանը իրավաչափ չէ, քանի որ սույն քաղաքացիական գործով ներկայացված հայցադիմումի հիմնավորումներով ապացուցվում է, որ «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ն թույլ չի տվել իրեն վերագրվող խախտումը (հենց այդ պատճառով է սույն քաղաքացիական գործով ներկայացվել հայցադիմում, որով վիճարկվել է ՍՊԸ-ի հայտը մերժելու իրավաչափությունը):

2) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ և ի պերատիվ պահանջում է, որպեսզի պատվիրատուի ղեկավարը կայացնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում:

Ինչպես նշել ենք, «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հրամանով նշված է ընդամենը հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ

հողվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հողվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանքի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Համաձայն որոշման՝ որպես փաստական հանգամանք (անհրաժեշտ տեղեկատվություն) նշված է հետևյալը. «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները մասամբ, մասնավորապես՝ բացակայում է Wi-Fi երթուղիչի ապրանքատեսակների արտադրողի կամ պաշտոնական դիստրիբյուտորի կողմից տրամադրված երաշխիքային նամակը MAF/DAF-ի: Այսինքն՝ մասնակիցը գնահատող հանձնաժողովի սահմանած ժամկետում պատշաճ կարգով չի վերացրել մատնանշված բոլոր թերությունները»:

Այսպիսով, սույն հրամանը կայացվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը և 2-րդ մասը:

5. Գտնում ենք, որ հայցադիմումով վիճարկվող հրամանը չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հողվածի 2-րդ մասի պահանջներին՝ որոշման պատճառաբանված լինելու պահանջին:

Ըստ Էդուարդ Աղայանի Արդի հայերենի բացատրական բառարանի՝ «պատճառաբանել» նշանակում է որևէ բանի պատճառը ցույց տալ, բացատրել, հիմնավորել, արդարացնել, որևէ բան արդարացնող պատճառներ՝ հանգամանքներ բերել, իսկ «պատճառաբանություն» նշանակում է այն փաստարկների, տվյալների ամբողջությունը, որոնք բերվում են որևէ բան պատճառաբանելու, հիմնավորելու նպատակով:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ Պատասխանողը հրամանով ընդամենը մեկ տողով նշել է հետևյալը. «Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հողվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հողվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում», սակայն թե հստակ ինչ իրավախախտում է թույլ տվել Հայցվորը, ինչ հիմնավորմամբ է վերոհիշյալի մեկնաբանվել որպես իրավախախտ վարքագիծ, որը հիմք է մասնակցին նշված ցուցակում ներառելու համար, մնում է միայն կռահել:

Դատարանին խնդրում ենք նկատի ունենալ, որ վիճարկվող հրամանով Պատասխանողը ընդամենը վկայակոչել է որոշակի փաստեր, մասնավորապես, որոշման՝ «Այլ անհրաժեշտ տեղեկատվության» բաժնում նշել է, որ. «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում

ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները մասամբ, մասնավորապես՝ բացակայում է Wi-Fi երթուղիչի ապրանքատեսակների արտադրողի կամ պաշտոնական դիստրիբյուտորի կողմից տրամադրված երաշխիքային նամակը MAF/DAF-ի: Այսինքն մասնակիցը գնահատող հանձնաժողովի սահմանած ժամկետում պատշաճ կարգով չի վերացրել մատնանշված բոլոր թերությունները»:

Սակայն նշված փաստերը ինքնին չեն հանդիսանում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք: Գտնում ենք, որ որպեսզի հրամանը լիներ պատճառաբանված, Պատասխանողը պարտավոր էր պատճառաբանել, հիմնավորել, որ վերոհիշյալ փաստերը, հանգամանքները հանդիսանում են այնպիսի իրավախախտումներ, որոնք հիմք են մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

(...)

2) Վիճարկվող որոշմամբ խախտված է նաև որոշակիության սկզբունքը, որը ուղղակիորեն հանգեցնում է որոշման չպատճառաբանված լինելուն: Վիճարկվող հրամանով որպես Հայցվորին պատասխանատվության ենթարկելու իրավական հիմք մատնանշված է «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը:

(...)

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը նախատեսում է 2 տեսակի իրավախախտ վարքագիծ, որոնք հանգեցնում են մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն, այն է՝ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, որը հանգեցրել է նման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը կամ պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, վիճարկվող հրամանից հստակ չի երևում, թե կիրառված սանկցիայի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նկարագրված երկու դիսպոզիցիաներից, որի խախտման արդյունքով է վրա հասել սույն վեճի առարկա անբարենպաստ հետևանքը: Վերոհիշյալը իր հերթին հանգեցնում է ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված որոշակիության սկզբունքի խախտմանը:

3) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը հստակ և ի պերատիվ պահանջում է, որպեսզի պատվիրատուի ղեկավարը կայացնի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշում:

Դատարանի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի

համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում քացառապես Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, սակայն տվյալ պարագայում ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի 16.02.2026թ.-ին կայացրած N 11-Լ հրամանը քննարկել է ոչ թե որոշում, այլ հրաման:

Այլ կերպ ասած, ըստ էության, «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հրամանի, այլ ոչ թե որոշման հիման վրա, մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը իմպերատիվ սահմանում է, թե ինչ իրավական ակտով պետք է կայացվի մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը:

Գտնում ենք, որ վերոշարադրված փաստերի առկայության պարագայում «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը իրավաչափ չէ: Տվյալ դեպքում Հայցվորի խախտված իրավունքների պաշտպանությունը հնարավոր է նաև ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի 16.02.2026թ.-ին կայացրած N 11-Լ հրամանը՝ «Ինտերակտիվ Սմարթ 10 Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ Դատարանի կողմից անվավեր ճանաչելու եղանակով:»

Թուլյատրելի հայցի առարկան փոփոխել և լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«2. Անվավեր ճանաչել «Ինտերակտիվ Սմարթ Տեխնոլոջիես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ԿԳՄՄՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի տնօրենի պաշտոնակատար Գ. Հովհաննիսյանի 16.02.2026թ.-ին կայացրած N 11-Լ հրամանը:»

2. Պատասխանող՝ «Կրթական Ծրագրերի Կենտրոն Ծրագրի Իրականացման գրասենյակ» պետական ՀՄ-իին և երրորդ անձ՝ «Արմսվիսթանկ» ՓԲԸ-ին տրամադրել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքակման:

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝
cabinet.armlex.am